ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2024

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, գնահատման չափանիշները, պատասխանների՝ համակարգչում նշման կարգի բացատրությունները և գրականության ցանկը:

Ուսուցիչների կամավոր ատեստավորման հարցաթերթիկի կազմման համար որպես հիմք են հանդիսացել «Կերպարվեստ» առարկայի հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերը և հանրակրթության պետական չափորոշիչների դրույթները, ինչպես նաև կերպարվեստին առնչվող հիմնարար գիտելիքները:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը պարունակում է 52 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր: Բովանդակային առումով թեստում ընդգրկված են կերպարվեստի հետևյալ բաժինները՝ բնօրինակից նկարչություն, թեմատիկ նկարչություն, դեկորատիվ նկարչություն, արվեստի պատմություն և տեսություն: Հարցերը պարունակում են նաև գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, դեկորատիվ կիրառական արվեստի և ազգային տարազի շրջանակները շոշափող առաջադրանքներ:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից պետք է ընտրել մեկը: Ճիշտ պատասխանի դեպքում տրվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Կարճ պատասխանով առաջադրանքները 2 տեսակի են՝

- **1-ին տեսակ**. Համապատասխանեցման առաջադրանք է: Տրվում են 4-ական միավորներ, որոնք զույգ-զույգ պետք է համապատասխանեցնել: Համակարգչային լուծման ընթացքը հեշտացնելու նպատակով առաջադրանքը տրոհված է 4 մասի, որոնցից յուրաքանչյուրում համապատասխանեցման ենթակա միավորի համար (դրանք կարող են լինել նկարներ, անուններ, անվանումներ կամ պարզապես հարցեր) տրվում է 4 տարբերակ (դրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է տրված միավորներից որևէ մեկին), այնուհետև տրվում է հաջորդ միավորը՝ միևնույն տարբերակներով, նույն կերպ՝ 3-րդը և 4-րդը: Այս 4 ենթակետերը միասին կազմում են մեկ ընդհանուր առաջադրանք, որի համար տրվում է 1 միավոր, եթե բոլոր 4 համապատասխանեցումները ճիշտ են կատարված: Ենթակետերից որևէ մեկի սխալի դեպքում առաջադրանքին միավոր չի տրվում, եթե անգամ մյուս 3-ը ճիշտ են:

  Նմուշ

  Համապատասխանեցնել նշված վարպետներին իրենց կառուցած ճարտարապետական կառույցներին:

  1. Անիի Մայր տաճար
     - Մոմիկ
     - Սիրանես
     - Տրդատ
     - Մանուել

2. Նորավանքի Սբ. Աստվածածին եկեղեցի
    - Մոմիկ
    - Սիրանես
    - Տրդատ
    - Մանուել
3. Ախթամարի Սբ. Խաչ եկեղեցի
    - Մոմիկ
    - Սիրանես
    - Տրդատ
    - Մանուել
4. Արատեսի վանքի գավիթը
    - Մոմիկ
    - Սիրանես
    - Տրդատ
    - Մանուել

- **2-րդ տեսակ**.

տրվում են 7-9 պնդումներ, որոնցից պահանջին համապատասխանում են որևէ 3-ը. դրանցից յուրաքանչյուրի համարի ճիշտ նշման դեպքում միավոր է տրվում. Այսպիսով, տվյալ առաջադրանքներից հնարավոր է վաստակել 1, 2 և առավելագույնը 3 միավոր:

ՀԱՄԱԿԱՐԳՉՈՒՄ ՆՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում պետք է նշել ճիշտ պատասխանին համապատասխանող շրջանակը: Միևնույն առաջադրանքի համար մեկից ավելի շրջանակներում նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

Կարճ պատասխանով առաջադրանքներից **1-ին տեսակի՝** համապատասխանեցման դեպքում յուրաքանչյուրի յուրաքանչյուր ենթակետի համար պետք է նշել ճիշտ պատասխանին համապատասխանող շրջանակը: Բոլոր 4 ենթակետերին ճիշտ պատասխանելու դեպքում տրվում է 1 միավոր: 4 ենթակետերից որևէ մեկի սխալ պատասխանի դեպքում առաջադրանքն ամբողջությամբ գնահատվում է 0:

Կարճ պատասխանով առաջադրանքներից **2-րդ տեսակի** դեպքում պետք է նշել ճիշտ պատասխաններին համապատասխանող 3 վանդակները: Չի կարելի նշել 3-ից ավելի վանդակ. ցանկացած 4 և ավելի վանդակ նշելու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 1, 2 կամ 3 նշումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Ղազարյան Վ., Հասրաթյան Մ., Հայ արվեստի պատմություն, Երևան, Զանգակ–97, 2009, 576 էջ
2. Աղասյան Ա., Արվեստի պատմություն. Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ Երևան, Արմավ, 2020, Գիրք 1, 256 էջ
3. Աղասյան Ա., Արվեստի պատմություն. Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Արմավ, 2022, 308 էջ

4. Հանրակրթական հիմնական դպրոցի «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 2012թ.
5. Եղիազարյան Ա., Զարդարվեստը հանրակրթական դպրոցում, Եր., Մանկավարժ, 2002թ., 107 էջ
6. Փափազյան Հ., Հայկական տարազ, Եր., 2000թ., 148 էջ

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: